

« Տէ՛ր Աստուած, բնաւ սառ չկայ ամառուան սաստիկ ջերմութեան  
ատեն, Յունիս ամսոյն մէջ ։»

Ցիրաւի բնաւ սառ շըլլայ. վասն զի, Նախ ապացուցեալ է, որ մեզի  
մատակարարուած սառն կազմեալ է 'ի ջրոյ, յորում կան ախտաւոր  
բողբոջք, և ինչպէս եռացմամբ կը չնջուին ճէիք, այսպէս սառով կը  
պահուին. ուստի բոլորովին աւելորդ է եռացընել զջուրը, եթէ անոր  
մէջ սառի կտոր դնելով՝ ճճի պիտի գոյացընես։

Երկրորդ, ապացուցուած է որ աւելի առողջութեան օգտակար է  
տաք քան թէ ցուրտ ըլմպել: Այերիկացի բժիշկ մի ցըցուց որ տաք  
ջուրն աղեաց շարժումը կ'առաւելու, կը սրբէ ներքին մաղասային  
մասերը, մաղձի հոսման կ'օգնէ, աղեաց մէջէն դուրս կը հանէ զայն  
և շժողուր որ արեան հետ խառնուի։

Չուրն տաք պէսք է լինել, և ոչ թէ գաղջ: Թէյի կամ առուրծի բա-  
րեխառնութիւնը հարկ է ունենայ, այն է 39-420, Դժուարահաղից  
համար մեծամեծ օգուտներ ըրած է տաք ջուրն: Վերջապէս, երեք  
հարիւր միլիոն Ճենացիք յանիշատակ ժամանակաց հետէ պաղ ջուր  
ըմպելու գաղափար չեն ունեցած. պիտի ըսես թէ Ճենաց համար լսու  
է, իսկ ինձի: Ստուգիւ, դու պիտի փորձես զայն. արդ զճճիս կ'ընտ-  
րես, թէ . . . . .

### ՏՊԱԳՐՈՒԹԵԱՆ ՍԿԶԲՆԱԿՈՐՈՒԹԻՒՆՆ

### ՕՍՄԱՆԵԱՆ ՊԵՏՈՒԹԵԱՆ ՄԷ

**Սպագրութիւնն** ներկայ յառաջադիմութեանց ծնունդ տուող այս  
արուեստս՝ անցեալ դարուն սկիզբները միայն մուտք գտաւ Տաճ-  
կաստանի մէջ: Այն ինչ տպագրութեան գիւտն յայտնի եղաւ, նոյն  
Ժամանակի (1483) Սուլդանն՝ Պայէզիտ Բ յատուկ հրովարտակ հա-  
նելով՝ իւր հպատակաց արգիլեց տպագրեալ գրոց գործածութիւնը՝  
մահուան պատիժ սպառնալով: Այս հրովարտակը վերստին հաստա-  
տեց 1515 իւր որդին՝ Սէլիմ III, և ամենայն խստութեամբ պահուե-  
ցաւ մինչև 1720 տարին:

Այս 1720 տարւոյ մէջ Ահմէտ Գ Սուլդանն դեսպան դրկեց Լու-  
գովիկոս ԺԵ Գաղղիոյ թագաւորին զՄէհէմմէտ. վերջինս միասին  
տարաւ 'ի ֆարիզ իւր որդին Սայիտ Եփէնտի, որ այս առթիւ այ-  
ցելութեան ելնելով Գաղղիոյ մայրաքաղաքին քանի մը տպագրա-  
տանց, հրաշացաւ տեսնելով թէ տպագրութեան արուեստն ինչպիսի  
բարոյական և նիւթական օգտաւէտ արգիլեց յառաջ կը բերէր, և  
մտածեց իւր հայրենեաց մէջ մտցընել զայն: իւր այս դիտմանն օգ-

նական գտաւ իպրահիմ անուամբ մէկն , որ թէպէտ և հունդարացի էր ծննդեամբ , այլ ջաճկաց կրօնքը կը դաւանէր :

Այս վերջինս աղերսաղիր մը զրեց , որ ներկայացուեցաւ Օսմանեան պետութեան՝ զիխաւոր նախարարին իպրահիմ փաշայի , զիտութեանց և արուեստորից հոչակաւոր Մ'եկենասին , որ ընդունեցաւ Առաջանէն գործոյն նպաստաւոր հրովարտակ մի . բայց որպէս զի ժողովը վըրդեան կրօնական զգացմունքն չյուզուի , Սուլդաննիմաստութեամբ արգիլեց Հուրանին տպագրութիւնն , ինչպէս նաև ուրիշ կրօնական և օրէնսդիտական գործոց հրատարակութիւնն , այլ յայտնեց որ միայն ուսումնական , իմաստասիրական , բժշկական և աստեղագիտական , աշխարհագրական իրաց տպագրութեան հրաման կայ :

Հետեւաբար կոյսերական-ջպազրատունն հաստատուեցաւ (1724 ին) , և վերոյիշեալ հունդարացին , որ յետոյ Պատմաձի , այսինքն Տը-պագրող մականունն ստացաւ , զլուխ դրուեցաւ գործոյն :

Առաջին հրատարակուած գործն եղաւ մեծազիր երկհատոր բառզիք արտաքերէն-րուրքերէն , որոյ հեղինակն է Վանքուի անուամբ մէկն : Այս գործոյս տպագրութիւնն աւարտեցաւ 1729 տարւոյն յունուարի մէջ . ինընին Սուլդանն որոշեց գրուածքին զինն՝ ՑՅ փարայ :

Ցանորդ տարին Քերականութիւն մի հրատարակուեցաւ , որոյ իւրաքանչիւր թերթերն (ըստ վկայութեան քանի մի զրագիտաց) զանազան գոյներ ունեցող թղթերով կազմուած է :

Իպրահիմ Պատմաձին մեռաւ 1746 տարւոյն մէջ , և թէպէտ շատ գործունեայ մարդ էր , սակայն 15 տարուան ընթացքի մէջ միայն 16 գործ կարող եղաւ հրատարակել :

Ահմէտ Գ. գահնկեց եղաւ 1730 տարւոյն մէջ Եէնիշերիներու ապաստամբութեամբ , յետ քսան և ութ տարի թագաւորելու : Պատմութիւնն թուրքիայի ընտրելագոյն Սուլդաններէն մին կը համարի զինքը :

